

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ 14-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բ. Գ. Պ., պրոֆ. ԹԵՐԵԶԱ ՇԱՎԵՐԴՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ՀԱԶՅԱՆ

Բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ

Սույն հոդվածում քննում ենք ստորադասական եղանակի ժամանակաձևերի վերահմաստավորումները, որոնք պայմանավորված են մի կողմից՝ բարդ համադասական և ստորադասական նախադասություններում այլ ժամանակաձևերի հետ քննվող ժամանակաձևերի ցուցաբերած համաժամանակյա և տարժամանակյա հաջորդականություններով, մյուս կողմից էլ՝ շաղկապների իմաստային դաշտով:

13-14-րդ դարերի քերական-մեկնիչ Եսայի Նչեցին իր մեկնությանը կցված խոնարհման աղյուսակում «ապառնույ ներգործական», «ապառնույ կրաւորական» ժամանակների անվանումների տակ տալիս է **գոլեն** բայի խոնարհված երկու տարբերակները՝ վերջիններիս հետ կիրառելով **եթէ** ստորադասական շաղկապը¹: Պետք է եզրակացնել, որ խոնարհման աղյուսակում ստորադասական եղանակի ժամանակաձևերը շաղկապների հարադրությամբ ներկայացնելը կարող էր բխել այն իրողությունից, որ հանդես էր եկել այնպիսի երկրորդական նախադասություններում, որոնք գլխավորի հետ կապվել են **եթէ** ստորադասական շաղկապով: Իհարկե, ինչպես ցույց կտանք ուսումնասիրության ընթացքում, ստորադասական եղանակի ժամանակները հանդես են եկել ինչպես բարդ համադասական, այնպես էլ՝ ստորադասական նախադասությունների մեջ:

Ժամանակակից հայերենի բարդ համադասական և ստորադասական նախադասությունների մասին տեսական գիտելիքները կառուցվել են՝ ելնելով համազոր կամ ոչ համազոր նախադասությունների ժամանակային հաջորդականությունից, որը շատ հաճախ բխում է խոսքում կիրառված շաղկապների իմաստից²:

¹ Տե՛ս Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (5-15դդ.), Երևան, 1954, էջ 290:

² Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, 2 մաս, Շարաիյունություն, Երևան, 1975, էջ 398-402. Պայմանի պարագա երկրորդական նախադասությունը քննելիս գտնում են, որ «մեծ մասամբ պայմանի պարագա երկրորդական նախադասությունների բայ-ստորոգյալի ժամանակն արտահայտվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակով, իսկ գլխավոր նախադասության ստորոգյալը՝ ենթադրական ապառնիով»: Բացի այս՝ նշելով նաև գլխավոր և երկրորդական նախադասություններում ժամանակա-

Շաղկապների ուսումնասիրությունները ևս տարվել են այս ուղղությամբ. կարևորվել են այս կամ այն շաղկապի՝ որևէ ժամանակաձևի հետ հարադրվելը, արտահայտած իմաստները և այլն:

Ժամանակակից հայերենի համադասական և ստորադասական շաղկապների արտահայտած իմաստային հարաբերությունները քննելիս Գ.Լ. Գարեգինյանը նկատի է ունեցել կապակցվող մասերի բովանդակությունը, նրանց շարադասությունը և դրանցում օգտագործված **բայերի եղանակա-ժամանակային ձևերը**, որոնցով էլ պայմանավորված է արմատական և բազմիմաստ շաղկապների այս կամ այն նշանակությունը¹: Սա է, թերևս, եղել կարևոր պատճառներից մեկը, որ Հովհաննես Երզնկացու, Եսայի Նչեցու և այլ քերական-մեկնիչների կողմից խոնարհման աղյուսակներում ստորադասական եղանակի ժամանակաձևերը ներկայացվել են շաղկապների հարադրությամբ, քանի որ վերջիններիս իմաստից կախված՝ ստորադասական եղանակի ժամանակները հանդես են բերել խոնարհման աղյուսակի՝ մյուս ժամանակներին հատուկ իմաստային նրբերանգներ, այսինքն՝ կիրառվել են երկրորդաբար: Այսպես՝ Անանուն մեկնիչը եղանակները սահմանել է՝ ելնելով բային լրացուցիչ իմաստ հաղորդող միջոցների՝ շաղկապների դերից. «Սահմանական է, յորժամ ասենք **կոփե, կոփեմ, աներևոյթ՝ կոփել**. հրամանեան՝ **կոփես**. ըղծական՝ **կոփիցեմ** արդեաւք, ստորադասական՝ **թե կոփեմ**»:²

Ինչպես արդեն նշեցինք, ժամանակակից հայերենի եղանակա-ժամանակային ձևերը քննվել են մի շարք մակարդակներում. ձևաբանական մակարդակից մինչև շարահյուսական և ոճաբանական մակարդակներ:³ Գրաբարի, միջին հայերենի քերականության ժամանակակից ուսումնասիրողները ևս անդրադարձել են ստորադասական եղանակի իմաստային դաշտին, որը, ըստ երևույթին, կապել են նախադասության բովանդակության հետ: Այս առումով հատկապես ուշագրավ է Լ. Հովհաննիսյանի աշխատությունը:⁴

Գրաբարի ստորադասական եղանակի առաջին ապառնին, ըստ Ա. Ա. Աբրահամյանի, համապատասխանել է աշխարհաբարի ըղծական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակներին, որոնց նշանակություն-

ձևերի այլ հաջորդումներ, ինչպես՝ «երկրորդական նախադասության ըղծական եղանակի բայաձևով արտահայտված ստորոգյալին գլխավոր նախադասության մեջ կարող են համապատասխանել նաև հարկադրական, սահմանական, մասամբ և ըղծական եղանակների ապառնիով և հրամայականով արտահայտված ժամանակ»:

¹ Տե՛ս Գ. Լ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 5:

² Տե՛ս Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (5-15դդ.), Երևան, 1954, էջ 159:

³ Ավելի մանրամասն տե՛ս Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառություններն արդի հայերենում, Երևան, 1959

⁴ Լ. Հովհաննիսյան, Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը, Լեզվի և ոճի հարցեր, հ.3, Երևան, 1973

նը կարելի է տարբերել նախադասության մեջ¹: Ա. Ա. Աբրահամյանը երկրորդ ապառնու համար ևս առանձնացրել է վերոնշյալ եղանակների ապառնիները՝ հավելած սահմանական եղանակի ապառնին²:

Նշենք, որ գրաբարի ստորադասական եղանակի իմաստների որոշման հարցում Ս. Անթոսյանը³, Ս. Ղազարյանը⁴ և Յ. Ավետիսյանը⁴ և այլք հիմքում ունեցել են Ա. Ա. Աբրահամյանի վերոնշյալ կանոնը:

Սակայն թե՛ վերոնշյալ լեզվաբանները, թե՛ դասական գրաբարի մատենագրության թարգմանությամբ զբաղվող հեղինակները չեն առանձնացրել թե ի՞նչն են հիմք ընդունել ստորադասական եղանակի՝ ըղծական, պայմանական, հարկադրական կամ ապառնու իմաստների տարբերակման հարցում: Սակայն անհերքելի է, որ գրաբար շարադրանքը թարգմանելով աշխարհաբար՝ լեզվաբանները մշակել են ստորադասական եղանակի իմաստների տարբերակման որոշակի սկզբունքներ:

Փաստորեն, ստորադասական եղանակի ցույց տված գործողության ժամանակը, կերպը և այլ՝ բայ-ստորոգյալին հատուկ հատկանիշներ (ցույց են տվել ապառնի ժամանակում ըղծալի, ենթադրելի կամ էլ հարկադրաբար կատարվելիք գործողություն), ձևաբանական մակարդակում հնարավոր չէ տարբերակել: Սա նշանակում է, որ ստորադասական եղանակը պետք է դիտել շարահյուսական ժամանակ, որի իմաստը բխում է նախադասության կառուցվածքից, նաև այն հանգամանքից, թե ինչ քերականական ժամանակներ են նախորդել կամ հաջորդել առաջին, երկրորդ ապառնիներին: Վերջին իրողությունը հատկապես կարևոր է այն դեպքում, երբ ստորադասական եղանակը հանդես է եկել գլխավոր նախադասություններում:

Չայ լեզվաբանության մեջ խոսելով ժամանակային հաջորդականության հարաբերության մասին՝ Ս. Գ Աբրահամյանը գրում է, որ այս հարաբերությամբ կապված նախադասությունները մեկը մյուսի շարունակությունն են, տեղի են ունենում նախորդից հետո, բխելով նրանից կամ առանց այդպիսի կապի (ինչպես՝ շարահասությունը): Ժամանակային հաջորդականությունն արտահայտվում է նաև **ստորոգյալների քերականական ժամանակով**, որի դեպքում «**ժամանակային հաջորդականություն արտահայտող նախադասությունների ստորոգյալները**

¹ Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 121:

² Տե՛ս նույն տեղում, էջ 143:

³ Տե՛ս Ս. Անթոսյան, Չայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Երևան, 1975, էջ 314-315:

⁴ Ռ. Ս. Ղազարյան, Յ. Ա. Ավետիսյան, Չայոց լեզվի պատմության գործնական դասընթաց, Երևան, 1989, էջ 106:

որվում են կամ նույն ժամանակով, կամ իրար հաջորդող ժամանակներով՝ ըստ ժամանակի բնական հաջորդման»¹:

Քննելով գրաբարի բայի քերականական ժամանակները՝ Լ. Յովհաննիսյանը նշում է, որ թեև ամեն մի ժամանակաձև ունի իր հարաբերականորեն կայուն ու անփոփոխ քերականական իմաստը, սակայն միևնույն ժամանակ «երբեմն այս կամ այն քերականական ժամանակը կարող է հանդես գալ այլ ժամանակի իմաստով»²:

Լեզվական ձևերի՝ իրենց քերականական բուն իմաստին ոչ բնորոշ նման կիրառությունը լեզվաբանն անվանում է ձևային կառույցների «երկրորդական, փոխաբերական կիրառություն»³, որին նույնանիշ է վերաիմաստավորում հասկացությունը: Գրաբարի շարահյուսական ողջ համակարգի քերականական բոլոր կարգերում նկատելի է միմյանց հանդեպ հարացուցային հակադրության մեջ գտնվող քերականական կաղապարների՝ մեկը մյուսի փոխարեն հանդես գալու լեզվաոճական ուշագրավ ունակությունը: Այսպես՝ դասական գրաբարում լայն տարածում են գտել լրիվ նախադասությունների փոխարեն նրանց թերի հոմանիշների կիրառությունը, որտեղ հաճախ նախադասության գլխավոր անդամներն արտահայտման պլանում հանդես են գալիս, որը, սակայն, չի խանգարում դրանց բովանդակային իմաստի ամբողջական ընկալմանը... Վերաիմաստավորման ժամանակ առաջին հերթին գործ ենք ունենում միմյանց հետ իմաստային կամ շարույթային որոշակի հարացույց կազմող լեզվական ձևերի հետ, որոնք ոճական որոշակի համատեքստում կարող են գործածվել մեկը մյուսի փոխարեն:

Այսպիսով՝ վերաիմաստավորումը, որպես լեզվաոճական ուրույն երևույթ, կարելի է բնորոշել որպես «լեզվական որևէ միավորի կիրառությունը հարացուցային շարքում նրա հակադիր անդամի գործառնությունը»⁴:

Այս կամ այն ժամանակի երկրորդական, փոխաբերական կիրառությունները առաջին հերթին պայմանավորված են նախադասության մեջ հանդես եկած մյուս ժամանակների հետ ունեցած փոխհարաբերություններով: Հատկապես այն դեպքում, երբ ստորադասական եղանակի երկու ժամանակաձևերի իմաստների տարբերակման համար տեսականորեն առանձնացվել է ըղծական, պայմանական, հարկադրական եղանակների ժամանակները, երկրորդ ապառնու համար նաև սահմանական եղանակի ապակատարը: Ստորադասական եղանակի ժամանակները վերաիմաստավորվում են այս կամ այն ժամանակի՝ նախ՝ այլ ժամանակներ-

¹ Ս. Գ. Աբրահամյան, ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 409:

² Տես Լ. Շ. Յովհաննիսյան, նույն տեղում, էջ 256:

³ Տես նույն տեղում, էջ 256:

⁴ Թ. Շահվերդյան, Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Երևան, 2007թ., էջ 10,17:

րի հետ ժամանակային հաջորդականության շղթայում ունեցած դիրքով, ապա և՛ պայմանավորված գլխավոր, թե երկրորդական նախադասությունների կազմում հանդես գալով: Վերջինիս հիմքում ևս ընկած է այն իրողություն, թե նախադասության տարբեր մասերը (այդ մասերը լինեն համազոր՞, թե՞ ոչ համազոր) կառուցվել են ժամանակների բնական հաջորդականության հիմքի՞ վրա, թե՞ ոչ:

Ստորադասական եղանակի ժամանակները միջին հայերենում սովորաբար չեն գործածվել պարզ նախադասություններում: Ստորադասական եղանակի ժամանակները հանդես են եկել բարդ համադասական և ստորադասական նախադասություններում՝ վերջիններիս մեջ կիրառվելով թե՛ գլխավոր, թե՛ երկրորդական նախադասություններում: Սակայն ստորադասական եղանակի ժամանակները ավելի շատ գործածվել են երկրորդական նախադասություններում, ինչը պայմանավորված է եղանակի քերականական իմաստով, այն է՝ միայն ապառնի ժամանակ ունենալու իրողությամբ: Վերջինիս համար կարևոր է այն, որ ելակետային գործողությունը արտահայտվի կատարված կամ կատարվող կերպի ժամանակաձևերով, որի հիմքի վրա էլ հաջորդող գործողությունները կարող են արտահայտվել ստորադասական եղանակի, այդ թվում նաև՝ այլ ապառնի ժամանակաձևերով:

1. Բարդ համադասական նախադասություններում ստորադասական եղանակի պարզ ժամանակների վերաիմաստավորումը պայմանավորված է մի շարք իրողություններով: Նախ՝ հաշվի ենք առել այն, թե ստորադասական եղանակին ինչ քերականական ժամանակներ են նախորդել կամ հաջորդել մյուս համազոր նախադասություններում, որոնցից զատ՝ կարևոր է նաև ժամանակ ցույց տվող բառերի, մակբայների, եղանակավորող բառերի դերը: Ըստ այդմ էլ՝ բարդ համադասական, ստորադասական նախադասությունների բաղադրիչները իրար նկատմամբ կարող են գտնվել համաժամանակության (լիակատար, մասնակի) և տարժամանակության հարաբերության մեջ: Եթե միաժամանակության հարաբերությամբ համազոր նախադասությունների գործողությունները կատարվում են միևնույն ժամանակահատվածում, գործ ունենք լիակատար համաժամանակության հետ: Մասնակի համաժամանակության դեպքում համազոր նախադասությունների գործողությունները կարող են արտահայտվել և՛ միևնույն ժամանակով՝ զուգակցվելով այդ գործողությունների՝ մեկը մյուսի համեմատությամբ կարճատևությունը, սահմանափակությունը, և՛ տարբեր ժամանակներով¹:

Համադասական նախադասության համազոր հատվածների բայ-ստորոգյալների լիակատար համաժամանակության հարաբերությունն արտահայտվում է երկրորդ ապառնիներով, որոնք ցույց են տալիս ըղծալի, ցանկալի գործողություններ:

¹ Տես Ս. Գ. Աբրահամյան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, 2 մաս, Շարահյուսություն, Երևան, 1975, էջ 322-328:

Օրինակ՝ «Սրովբեագունդ ջոկք աթոռոցդ, քեզ ի մաղթանս **առկայասցի**։ Սիրովդ քո, տէր իմ Յիսուս, սիրտ իմ ճըմլեալ **խոցոտեսցի**» (ՅԵ, էջ 112), «Ահայ, ի չափ կատարածի իմուն կենացս եկեալ հասի, Անիւս ի գուրք **ընկըրկեսցի**, լար արծաթոյս **խորտակեսցի**» (ՅԵ, էջ 112):

Միջին հայերենում հազվադեպ են երկրորդ ապառնի-առաջին ապառնի հաջորդումները, որի պատճառը առաջին ապառնու ոչ հաճախակի գործածությունն էր։ Ընդ որում, առաջին և երկրորդ ապառնիների դիրքերը փոփոխական են, ինչը հնարավորություն չի տալիս պարզելու երկու ժամանակաձևերի կերպափոխմաստային տարբերությունները։ Օրինակ՝ «**Դարծցին առ արս դըստերք քոյին Յօրինաւոր սուրբ յանկողին, Դասըս սրբոց ծընանիցին** Լընուլ գերկնից արքայութիւն» (ԱՍ, էջ 91), «Առեալ ըզմահ **ըսպանանից (//սպանանիցից, սպանիցեն, սպանեսցին)** Եւ ըզխայթոցըն **փըշրեցից**։ Չմաղծ դառնութեան քոյին թիւնից Ի բանսարկուին սիրտըն **լըցից**» (ԱՍ, էջ 95):

Լիակատար համաժամանակության հարաբերությամբ համազոր նախադասություններում առավել հաճախ գործածվել են **են** պակասավոր բայի առաջին ապառնիները, որոնք երբեմն ուղղակիորեն հանդես են եկել **լինիմ** բայի փոխարեն։ Օրինակ՝ «**Դեւք են բարի ի բնութենէ, Բայց կամքըն չար զինչ և իցէ՛ Ու զչարն ամենայն որ նախատէ Բայց առանց չար ո՞վ որ իցէ**» (ԱՍ, էջ 60),

Տարժամանակության հարաբերությամբ համազոր նախադասությունների դեպքում գործում է հետևյալ օրինաչափությունը. «Տարբեր ընդհանուր ժամանակներով արտահայտվող տարժամանակությունը կարող է ունենալ ժամանակների տարբեր հերթականություն. **անցյալ և ներկա, անցյալ և ապառնի, ներկա և ապառնի**»¹:

Սա նշանակում է, որ միայն ապառնի ժամանակ ունեցող ստորադասական եղանակը կարող էր հաջորդել ներկա և անցյալ ժամանակներին։ Այսպես՝ **ներկա և ապառնի** տարժամանակության հարաբերության արտահայտության դեպքում վերջինիս հետ հնարավոր են հետևյալ դիրքային զուգակցումները.

ա. գրաբարի սահմանական ներկա-անկատարը-ստորադասական եղանակի երկրորդ ապառնի, ուր ներկայով նշվում է կատարվող գործողություն, որն էլ հինք է դառնալու ցանկալի գործողության կատարման համար։ Գործողությունների կատարման համար նախատեսվող ժամանակային շղթայում ժամանակաձևերը շատ հաճախ ներթափանցված են կիրառվել, որի պատճառը, թերևս, գրաբարի սահմանական ներկա-անկատարի՝ և՛ բուն ներկայի, և՛ ըղծականի գործառույթներով գործածվելն էր։

Օրինակ՝ «**Ռահիւք զմեզ յերկինս հայցենք** ուղղել այսօր, Այսօր զմեզ

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 328:

յերկինս հոգով **ածցես** (ածես) յաւետ» (ՅԵ, էջ 81), «Մէկըն ի զըրկանացըն **հարըստի**, Մէկն յիրայնո՛ցն **աղքատացի** (=աղքատանա)» (ՖՏ, էջ 105):

բ. ստորադասական եղանակի երկրորդ ապառնին և սահմանական ներկան՝ ըղծական իմաստով,

Օրինակ՝ «**Ցընծացուրք** (ցնծայիմք) և մեք հոգւով, Ընդ ծընունդ փըրկչին մարմնով, **Օրհնենք** հրեշտակացն երգով. Մայր Մանուէլի սուրբ կոյս» (ՅԵ, էջ 102), «Նամակիս **արացես** (=անես) շուտով պատասխան եւ ինձ **ժանուցանես** (=ժանուցես) զժամ քո գալստեան» (ԽԿ, էջ 22):

Տարժամանակության հարաբերությամբ համադաս նախադասությունների մեջ անցյալ և ապառնի ժամանակները կարող են արտահայտվել հետևյալ կերպ.

ա. անցյալ կատարյալ և ստորադասականի ապառնիներ, ինչպես նաև ստորադասականի ապառնիներ և անցյալ կատարյալ, որի դեպքում է, որ առաջին և երկրորդ ապառնիները կարող էին վերաիմաստավորվել անցյալ կատարյալի:

Օրինակ «Անըսկիզբն մեզ սկիզբն **եղեալ**, ովսանայ, Բանն ի հօրէ մեզ **լոյս ծագեաց**, **օրհնեսուրք** (=օրհնեցիմք)» (ԽԿ, էջ 42), «Մեք նեղացաք, և դու **գթասցիս**» (ՅԵ, էջ 215), «Երկինք և երկիր քեզ **երանիցեն** (=երանի տան), Չարկօղըն լուսոյն ի քեզ կրեցեր» (ԽԿ, էջ 44), «Ի վեց կողմանց պաշարիցիմ Ըստ վեց շարժմանց իմոյ յանցին. Կարակուսեալ ի նոյն միջին՝ Կըսկըծալից անձամբ հալին» (ԱՍ, էջ 45):

բ. վաղակատար անցյալ և առաջին ապառնի

Օրինակ՝ «Իսկ զնշխարս սրբոյն **հանեալ էին** յառաջագոյն բնակիչք վանիցն՝ երկուցեալ ի բազմութենէ ամբոխին, գուցէ ոչ **կարիցեն հանել** պատրաստութեամբ» (ՅԵ, էջ 213),

գ. վաղակատար ներկա և երկրորդ ապառնի

Օրինակ՝ «Այն որ է **ստեղծել** զաշխարհս՝ հայր և որդին և սուրբ հոգին, երրորդութիւն միասնական, անզատելի մի տէրութիւն. Նըմա փառըս **տացուրք** (=տանք) յամէն լեզուաց, մեծ գոհութիւն» (ԿԵ, էջ 149):

Կամ շաղկապով ձևավորված համադասական նախադասություններում որպես կանոն հանդես է եկել միևնույն բայը՝ արտահայտված տարբեր եղանակներով, ինչպես՝ «ՈՐ որպես էի կամ **զի՞նչ եղայ**, Կամ **զի՞նչ լիցին** (// լինիմ) առաջիկայ» (ԱՍ, էջ 34):

Այլ շաղկապն արտահայտում է համադաս նախադասությունների միջև ներհակական հարաբերություն: Նման հարաբերության դեպքում առաջին համագոր նախադասության մեջ սովորաբար հանդես է եկել «մի՛ + երկրորդ ապառնի» կազմությունը, իսկ մյուս համագոր նախադասության մեջ՝ երկրորդ ապառնին: «Մի՛ + երկրորդ ապառնի» կազմությունը վերաիմաստավորվում է արգելական հրամա-

յականի, որի պատճառով էլ **ամբարծցիս** երկրորդ ապառնին վերաիմաստավորվում է հրամայական ներկայի:

Օրինակ՝ «*Յերևելիսըդ մի՛ կացցես գայթակղական, այլ ամբարծցիս յիմանալիս գերունական*» (ՅԵ, էջ 268):

Իսկ շաղկապը ևս իրար կապակցում է ներհակական հարաբերությամբ համազոր նախադասություններ, որոնցում առկա է երկրորդ ապառնիներով դրսևորվող լիակատար միաժամանակություն: Օրինակ՝ «*Ահա բարի սերմանահանքըն հնծեսցեն (=կհնծեն) զպըտուղ բարեաց, Իսկ սերմաողքըն չարութեան ժողովեսցեն (=կժողովեն) փուշ խոպանաց*» (ԿԵ, էջ 151):

Բերված օրինակում հնծելու և ժողովելու գործողությունները կատարվելու են միաժամանակ, սրանք չեն ենթադրում հաջորդաբար կատարվելիք գործողությունների գաղափար, այլ մեկը մյուսի նկատմամբ գտնվում են հակադիր հարաբերության մեջ: Փաստորեն, **այլ, իսկ** շաղկապներով կապվող ներհակական հարաբերությամբ համադաս նախադասություններում գործում է միայն լիակատար համաժամանակություն:

Առանձին ուշադրության է արժանի նաև հաջորդական գործողությունների արտահայտումը երկու **ապառնիների** միջոցով: Այսպես, կարող են հաջորդել **բուն հրամայականը** և **երկրորդ ապառնին**, որի դեպքում երկրորդ դեմքով արտահայտվող հրամայական ժամանակին նախորդել է հոգնակի առաջին դեմքով արտահայտված երկրորդ ապառնին: Երկրորդ ապառնու կատարելիությունը կախված է առաջին հերթին այն բանից, որ խոսակիցը կամ խոսակիցները կատարեն հրաման-կարգադրությունը, ապա դրանից կախված էլ՝ կատարելի գործողությանը մասնակցելու են և՛ խոսողը, և՛ խոսակիցը կամ խոսակիցները: Սա նշանակում է, որ գործողությունների կատարման ժամանակային շղթայում հրամայական եղանակով ցույց տրվող գործողությունը կարող է կատարվել միայն երկրորդ ապառնու ժամանակով ցույց տրվող գործողությունից ավելի շուտ:

Օրինակ՝ «*Եկա՛յք, լացցո՛ւք ամենեքեան Ըզտանջելոցն որ անդ մընան*» (ԱՍ, էջ 55), «*Աստ. Բերե՛ք զարկածք չարին Առհասարակ ամենեքին. Արկե՛ք ի բուկս հրահալոցին, Տեսցո՛ւք թէ զի՞նչ ծընանիցին*» (ԱՍ, էջ 12), «*Ասեն. Բերե՛ք զանապակ գինին, Ըզդառն և զմրորն խաւարային, Թաս բըռնեսցուք նախաստեղծին՝ Զի նա արբք՞ զմահն իւր անձին*» (ԱՍ, էջ 16):

Ստորադասական եղանակի ժամանակածևր հաջորդելով ներկա հրամայականին՝ հանդիսանում է հրաման-կարգադրությամբ կատարվելիք գործողության տրամաբանական շարունակությունը: Ստորադասական եղանակի հոգնակի առաջին դեմքով արտահայտվում են կտրուկ ցանկություն, մտադրություն, պահանջ, որոնք հանդես են գալիս խոսողի կողմից և ուղղվում խոսակցին՝ միասին մի բան անելու, կատարելու: Ներկա հրամայականի դերով կիրառվել են **գալ, բե-**

րել, արկանել և այլ շարժում ցույց տվող բայեր, իսկ ստորադասականի համար՝ **տեսնել, լացել** բայերը:

Հրամայական-ստորադասական եղանակների հաջորդականությունները զուգաբայի արժեքով կարող են գործածվել այն դեպքում, երբ երկու ժամանակաձևերը տրոհված չեն ստորակետով: Ջուզադրական բայերի այն տեսակը, որի առաջին բաղադրիչը արտահայտվել է հրամայական, իսկ երկրորդը ստորադասական (հետագայում՝ միայն ըղծական) եղանակով, անշուշտ, առաջացել է նմանատիպ անկախ նախադասությունների միացման ճանապարհով: Նշված զուգադրական բայերը ուղիղ ձևեր չեն կարող ունենալ, այլ գործածվում են միայն խոնարհված ձևերով: Բացի այդ՝ այս տիպի զուգադրական բայերը բնութագրվել են հետևյալ հիմնական առանձնահատկություններով, նախ այն, որ երկրորդ դեմքին վերաբերող գործողությունը պարտադիր կերպով արտահայտվում է բարդության առաջին բաղադրիչով, որը և հրամայական եղանակի բայածն լինելով՝ խոսողի կողմից խոսակցին ուղղված հրաման, հորդոր կամ թելադրանք է ցույց տալիս, իսկ առաջին դեմքին վերաբերող գործողությունն էլ արտահայտվում է բարդության երկրորդ բաղադրիչով, որը ժամանակակից հայերենում ըղծական եղանակի, իսկ գրաբարում՝ ստորադասական եղանակի երկրորդ ապառնիի բայածն լինելով՝ ցույց է տալիս, թե ինչ է ցանկանում կամ ուզում անել խոսողը. «Եվ որովհետև առաջին բաղադրիչով հրամայական կամ, ավելի ճիշտ, հորդորական, իսկ երկրորդով՝ ըղծական, ցանկալի գործողություն է ցույց տրվում, ապա այդ հիմքի վրա նրանք տրամախաչվում են միմյանց հետ և, երկու տարբեր գործողություններ միավորելով իրար, արտահայտում են մի ընդհանուր նշանակություն»¹:

Այս տիպի զուգաբայերը հազվադեպ են, քանի որ շատ հաճախ հրամայական-ստորադասական եղանակների միջև տրոհման որևէ նշան է դրվել հետագա գրիչների, ընդօրինակողների կողմից, և այս ճանապարհով էլ ձևավորվել են անկախ նախադասություններ: Օրինակ՝ «**Եկայք դիցուք** նմա մատնահար, թերևս յառնէ անմարմնաբար» (ԱՍ, էջ 182):

Ներկա հրամայականի և երկրորդ ապառնու նմանատիպ զուգակցումները, անշուշտ, միջնադարյան գեղարվեստական խոսքին հաղորդել են կենդանի շունչ, նպաստել գեղարվեստական շարժում պատկերների ստեղծմանը:

2. Բարդ ստորադասական նախադասություններում ստորադասական եղանակի վերահիմաստավորումները

Գլխավոր նախադասությունը քերականորեն գերադաս և ստորադաս նախադասություններ ունեցող միավոր է, ուր այս կամ այն նախադասության գլխավոր կամ երկրորդական լինելը չի բխում իմաստային ժանրաբեռնվածությունից: Շատ

¹ Ալ. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 302-303:

հաճախ այս նախադասություններում արտահայտած իմաստի ժանրաբեռնվածության տեսակետից առաջնությունը երկրորդական նախադասություններին է, փաստորեն վերջինս միայն քերականորեն է ստորադասված գերադասին: Երկրորդական նախադասությունների էական կողմերից մեկն այն է, որ «ստորադաս նախադասությամբ ձևավորված անդամն իր **ստորոգական-եղանակավորական ու ժամանակային հատկանիշներով** արտահայտում է **օբյեկտիվ (ժամանակային և այլ)** և **սուբյեկտիվ (եղանակային և այլ) հարաբերություններ**, որոնք միայն նախադասությամբ կարող են արտահայտվել»¹:

Հիմք ընդունելով նշված իրողությունը՝ փորձել ենք քննել գլխավոր և երկրորդական նախադասություններում գործածված ստորադասական եղանակի ժամանակաձևերի երկրորդական կիրառությունների հետ առնչվող մի շարք խնդիրներ. ինչպես օրինակ՝ գլխավոր և երկրորդական նախադասություններում ստորադասական եղանակը ինչ ժամանակային հարաբերության մեջ է գտնվել այլ ժամանակաձևերի հետ և այլն:

Ստորադասական եղանակը գլխավոր նախադասություններում քիչ գործածական է եղել դեռևս գրաբարում, այն 14-րդ դարի գրականության մեջ ևս հազվադեպ է կիրառվել գերադաս նախադասություններում: Թերևս սա էր պատճառը, որ «գրաբարի քերականներն այս եղանակի բայաձևերն ստորադասական են կոչել՝ նկատի ունենալով դրանց առավելապես ստորադաս երկրորդական նախադասություններում օգտագործված լինելու հանգամանքը»²:

2.1. Գլխավոր նախադասություններում գործածվող երկրորդ ապառնու վերաիմաստավորումները: Գլխավոր նախադասություններում հանդես են եկել երկրորդ ապառնու միայն առաջին, երրորդ դիմաթվային ձևերը, որոնք շատ հաճախ կորցրել են իրենց բուն բայական իմաստները և դարձել են եղանակավորող կամ վերաբերմունքային իրողություններ նշող միջոցներ: Գլխավոր նախադասություններում երկրորդ ապառնու վերացական իմաստը առաջացել է գերադաս դիրքի, ինչպես նաև նրան անմիջապես հաջորդող **և** համադասական շղկկապի պատճառով: Դրանք վերաիմաստավորվել են միայն որպես ըղծական, հետագայում նշել խոսողի վերաբերմունքը այս կամ այն գործողության նկատմամբ: Սակայն գլխավոր նախադասություններում երկրորդ ապառնին հանդես է եկել նաև այլ անդամներից հետո՝ այստեղ ևս արտահայտելով վերաբերմունք:

Օրինակ՝ «Բայց որո՞վք երանգօք ի դեմս **բերից** գփառազարդ քո տիպ տիրական, Ո՞ր բան բաւ է զընտիր բարուց քոց յօրինուածս բարի ի կիր արկանել» (Յե, էջ 142), «**Թողից** և զայլս ասել սըմա երկայն ըզբան, որ ի յանբոյսս և բուսա-

¹ Ս. Գ. Աբրահամյան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, 2 մաս, Շարահյուսություն, Երևան, 1975, էջ 356:

² Ս. Անթոսյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Երևան, 1975, էջ 308:

կանս **է** ազդական» (ՀԵ, էջ 245), «Առ որս **ասասցուք**, եթե առաքինութիւնն և չարութիւնն սեռ են ամենայն բարի և չար գործոց» (ՀՈ, էջ 242):

Գլխավոր նախադասության սկզբում հանդես եկող երկրորդ ապամեհին իր բայական լիարժեք իմաստը պահում է այն դեպքում, երբ իրար հաջորդող պարբերություններում կրկնվում է բայ-ստորոգյալը: Նման տիպի կրկնությունները սաստկացնում և ընդգծում են դառնալ բայով նշվող գործողության կարևորությունը, որը եղանակավորող երանգ է ձեռք բերել, երբ կիրառվել է **և** շաղկապից առաջ: Օրինակ՝ «Առ առն **դարձցի** // դարձի հայրն առաջին Այնն որ էին երկու որդին, (ԱՍ, էջ 91), «**Դարձցին** առ արս դըստերք քոյին Յօրինաւոր սուրբ յանկողին» (ԱՍ, էջ 91), «**Դարձցուք** և մեք ամենեքին Յայր կատարեալ չաք հասակին» (ԱՍ, էջ 91):

Բերված օրինակներում **բերից, թողից, ասասցուք** երկրորդ ապամեհինները վերաիմաստավորվում են այսպես՝ **բերեն, թողնեն, ասենք** և այլն, որոնց մի մասը հետագայում անցել են վերաբերականների շարքը:

2.2. Ստորադասական եղանակի ժամանակաձևերի գործածությունը երկրորդական նախադասություններում:

2.2.1. Երկրորդ ապամեհու վերաիմաստավորումը նպատակի պարագա երկրորդական նախադասություններում: **Ձի** ստորադասական շաղկապը միջին հայերենում բազմիմաստ կիրառություններ ուներ. այն կարող էր գերադաս նախադասությանը կապել նպատակի, պայմանի, հիմունքի երկրորդական նախադասությունները¹: Սակայն, ըստ 14-րդ դարի հեղինակների լեզվաբանության, զի շաղկապը գործածվել է ավելի շատ **որպեսզի** իմաստով՝ գլխավոր նախադասությանը կապելով նպատակի պարագա երկրորդական նախադասությունները: Ստորադասական եղանակի ժամանակաձևերը ավելի շատ գործածվել են զի շաղկապով ձևավորվող նպատակի պարագա երկրորդական նախադասություններում, որտեղ ժամանակաձևերը արտահայտում են միայն ըղծական եղանակի ապամեհու, անցյալի իմաստներ: Ստորադասական եղանակի ժամանակաձևերը միջին հայերենում ավելի հաճախ հանդես են գալիս ըղծականի իմաստով, որովհետև **զի** շաղկապը կորցրել է իր մյուս իմաստները, և այդ շաղկապով ձևավորված երկրորդական նախադասության նպատակի տեսակով պայմանավորված էլ ժամանակները միայն իղծ կարող են արտահայտել:

Օրինակ՝ «**Իսկ զունակութիւն և զպակասութիւնդ զանազանէ յայլոց հակակայիցն, զի մի թուեսցի տգիտաց ունէք**» (ՀՈ, էջ 220), «**Թաս բռնեսցուք նախաստեղծին Ձի նա արքգէ զմահն իւր անձին**» (ԱՍ, էջ 16), «**Պատասխանի**

¹ Տե՛ս Ս. Անթոնյան, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 460-461:

տըւեալ նորին՝ **Ջոր պատրեստէ բանիւ զՆախնին**» ԱՍ, էջ 29, «Առ, կեր և դու նովին բաղձնամք **Ջի լինիցիմք** աստուածանման» (ԱՍ, էջ 30):

Բերված օրինակներում գլխավոր նախադասություններում հանդես են եկել սահմանական ներկա, հրամայական ներկա ժամանակները, իսկ երկրորդականում՝ երկրորդ ապառնիները, որոնք ավելի հաճախ սկսել են փոխարինվել ըղծական եղանակի ժամանակներով: Այն, որ նպատակի պարագա երկրորդական նախադասություններում գործածված երկրորդ ապառնին վերահիմաստավորվում էր ըղծականի, ևս մեկ անգամ փաստվում է այն իրողությամբ, որ Առաքել Սյունեցու «Դրախտագիրք» պոեմի տարբերակներում՝ որպես զուգահեռ ձևեր, ներկայացված են միայն ըղծականները: **Ջի** շաղկապի **որովհետև**, **քանի որ** քերականական իմաստները հետագայում սկսեցին հանդես գալ այնպիսի երկրորդական նախադասություններում, որոնցում ստորադասականին փոխարինել էին պայմանականի ժամանակաձևերը:

2.2.2. Ստորադասական եղանակի վերահիմաստավորումը ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում:

Ստորադասական եղանակի ժամանակաձևերը կիրառվել են նաև ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում: Միջին հայերենում ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը¹ գերադաս նախադասության հետ կապվել է **յորժամ** և **յայնժամ...յորժամ** զուգադրական շաղկապներով, ինչպես նաև **մինչ**, **մինչև** շաղկապներով:

Յորժամ շաղկապով ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում հանդես եկած ստորադասական եղանակի ժամանակների վերահիմաստավորման դեպքում կարևորվում է այն հանգամանքը, թե գերադաս նախադասության ստորոգյալը ինչ ժամանակով է արտահայտված, քանի որ «երկրորդական նախադասությունը գլխավորի գործողության ժամանակը մասնավորում է քերականական-իրադրական առումով: Սա կատարվում է գլխավոր նախադասության գործողությանը զուգադրելով երկրորդական նախադասության գործողությունը, և գլխավորի ժամանակն, այսպիսով, մասնավորվում է երկրորդականի քերականա-իրադրական եզրի համեմատությամբ»²: Այսպես՝ «Բնաբան. **Յորժամ** այլ զայլմէ **ստորոգիցի** և **այլոցն սեռիցն և տեսակացն**» (ՅՈ, էջ 22):

Բերված օրինակը բնաբանի արժեք ունի, գերադաս նախադասության եզրը բացակայում է, ինչը ժամանակի պարագա երկրորդական նախադասությանը

¹ Քննում ենք միայն այն ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները, որոնցում գործածվել է ստորադասական եղանակի ժամանակաձև:

² Ս. Գ. Աբրահամյան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, 2 մաս, Շարահյուսություն, Երևան, 1975, էջ 389-390:

բնորոշ չէ, որը ստորադասվում է նախորդող կամ հաջորդող նախադասությանը, առաջին ապառնին վերախմաստավորվում է սահմանական ներկայի:

Այն բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասությունները, որոնց կազմում ժամանակի պարագա երկրորդական նախադասության հետ հանդես են գալիս այլ բնույթի երկրորդական նախադասություններ (հիմնականում՝ ուղիղ խնդիր կամ որոշիչ երկրորդական նախադասություններ), ստորադասական եղանակի վերախմաստավորման ակտին մասնակցում են մի կողմից գերադասի ժամանակը, մյուս կողմից էլ՝ երկրորդական նախադասությունների ժամանակները: Այսպիսի կառուցվածքի դեպքում գործում է գլխավոր և ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների ժամանակների տարժամանակյա հարաբերություն. «երկրորդական և գլխավոր նախադասությունների գործողությունների ու եղելությունների իրական ժամանակները չեն համընկնում, այլ մեկը հաջորդում կամ նախորդում է մյուսին (թեկուզ և դրանք արտահայտված լինեն քերականական միևնույն ժամանակաձևով)»¹: Մինչդեռ ժամանակի պարագա երկրորդական նախադասության և մյուս երկրորդական նախադասությունների ժամանակները գտնվում են գրեթե միշտ մասնակի համաժամանակյա հարաբերության մեջ: Այսպես՝ «Ոյք զողջութիւնն ի բնութենէ **ունին** (2), ասէ(1), **յորժամ** անբարեխառնութիւն օդոյ **դիպիցի** նոցա(3), **ոչ կարէ** դիրաւ **հերքել** զառողջութիւնն(4) կամ մարդն ոչ դիրաւ **ըմբռնի** (5) և հերքի յախտիցն(6)» (ՅՈ, էջ 160):

Գերադաս նախադասության գործողության ժամանակը ներկան է, ուղիղ խնդիր երկրորդական նախադասության գործողության ցուցիչը մշտատև ներկան² է, որի հետևանքով էլ ժամանակի պարագա երկրորդական նախադասության կազմում կիրառված առաջին ապառնին վերախմաստավորվում է պայմանական ապառնու: Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը, նշելով գլխավոր նախադասության գործողության կատարման ժամանակը, կարծես, նաև որոշակի պայման, հիմք է դարձել մյուս երկրորդական նախադասությունների գործողությունների, եղելությունների կատարման համար: Սա է պատճառը, որ երկրորդ ապառնու վերախմաստավորման արդյունքում ունենք պայմանական ապառնի:

Յորժամ....յայնժամ զուգադրական շաղկապներով ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում հանդես եկած գործողությունների ժամանակները պարտադիր կերպով արտահայտում են մասնակի համաժամանակյա հարաբերություն: Օրինակ՝ «*Իսկ երբ զդիպաւոր ժամանակն ասէ, **յորժամ** թշնա-*

¹ Տես նույն տեղում, էջ 392:

² Տես նույն տեղում, էջ 146-147:

միքն մերձ լիցին (մերձ լինեն) յայնժամ շարժի(կշարժվի)» (ՀՈ, էջ 246), «Եւ աղաչեն վասըն սորիմ՝ **Յայնժամ կընոջ մեղքըն թողցին**» (ԱՍ, էջ 31):

Մինչ, մինչև ստորադասական շաղկապները ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը կապում են գերադասին, ընդ որում՝ գլխավոր նախադասությունը միշտ գործածվել է նախադաս: Գլխավոր նախադասության ժամանակներն են սահմանական ներկան, անկատարը, ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում հանդես եկած ստորադասականի ապառնիները (կրավորածև խոնարհման) վերափմաստավորվում են պայմանական ապառնու:

Օրինակ՝ «Միշտ տըրտմութեամբ **կացցես** յերկրի շիաց քո **ուտես** քըրտամբբ ի լի, **Մինչև** ի հող դարձցիս յերկրի, Որ ամենայն **չար խափանի**» ԱՍ, էջ 81, «Որդեակք իմ, զորս դարձեալ վերստին **երկնեմ, Մինչև նկարեսցի Քրիստոս ի ձեզ**» (ՀԵ, էջ 188), «Եւ **պահէին** զգուշութեամբ, **մինչև շինեսցի** եկեղեցին ի վերայ գերեզմանին, զի անդ եկեալ ի տեղւոջն գերեզման յօրինեսցեն գեղեցկազարդ կազմեալ և մեծածախ զարդիւք» (ՀԵ, էջ 221), «Եւ **երկնէ մինչ վերըստին ծնցի**» (ՀԵ, էջ 231):

Գլխավոր նախադասության ստորոգյալը են դարձել նաև հրամայական եղանակի ժամանակները՝ հորդորական և բուն հրամայական հաջորդականությամբ, որոնց ետադասվել է ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը՝ երկրորդ ապառնի ժամանակով:

«-Գնասջիք զգիշերս զայս եղբայրական դասին հսկումն արասջիք, և ի վաղիւն բրեցէք զտեղին, **մինչև երևեսցի** զգերեզմանն, և ինձ ազդ արարէք, զի եկեալ հանցուք զուրախարար գանձն Հայաստանեայց» (ՀԵ, էջ 212-213):

Նախադասություններում կիրառվող ապառնի ժամանակների ապառնիությունը ավելի են ընդգծում **զգիշերս, ի վաղիւն** բառերը, որոնցով պայմանավորված հորդորական հրամայականի ժամանակները վերափմաստավորվում են հարկադրական ապառնու: Հորդորական հրամայական, բուն հրամայական ժամանակները ցույց են տալիս խոսողի կողմից ապառնի ժամանակում խոսակիցների կողմից կատարելի գործողություն, մինչդեռ երկրորդ ապառնու արտահայտած գործողությունը կատարվելու է առանց որևէ միջամտության: Երկրորդ ապառնին մասնավորվում է ըղձական ապառնու, որի մեջ կա նաև պայմանի որոշ նրբերանգներ, քանի որ երկրորդ ապառնուն հաջորդող գործողությունների կատարումն էլ բխեցվում է գերեզմանը երևալու իրողությունից:

2.2.3. Ստորադասական եղանակի վերափմաստավորումը պայմանի պարագա երկրորդական նախադասություններում:

Ստորադասական եղանակի ժամանակները հանդես են եկել նաև պայմանի պարագա երկրորդական նախադասություններում, որը ցույց է տալիս գլխավոր նախադասության բայական անդամի արտահայտած գործողության, եղելության

պայմանը: Պայմանի պարագա երկրորդական նախադասությունը¹ գլխավորի հետ կապվել է **թէ**, **եթէ** զուգադրական շաղկապների միջոցով:

Միջին հայերենում **թէ** և **եթէ** շաղկապների միջև իմաստային որոշակի սահմանազատում չկա. «**թէ** օգտագործվում է **եթէ** պայմանի ստորադասական շաղկապի իմաստով և՛ ընդհակառակն»²:

Եւեթնք նաև, որ **թէ**-ն **եթէ** շաղկապի համեմատությամբ ավելի գործածական է, ընդ որում **թէ** շաղկապը շատ հաճախ վերաիմաստավորվում է **եթէ**: Մանավանդ այն դեպքում, երբ 14-րդ դարի հեղինակները, խուսափելով միևնույն շաղկապի անհարկի կրկնություններից, կիրառել են մեկը մյուսին փոխարինելու սկզբունքով:

Թէ, **եթէ** շաղկապները արտահայտում են իրագործելի և անիրագործելի ենթադրություններ, որոնց մյուս՝ գլխավոր կամ երկրորդական նախադասություններում համապատասխանում են հետևանքի երեք տարբեր տեսակներ՝ դրսևորված տարբեր եղանակաժամանակային ձևերով:

Պայմանի պարագա երկրորդական նախադասություններում գործածված ստորադասական եղանակի ժամանակները վերաիմաստավորվում են պայմանականի ապառնու իմաստին, որը բխում էր **թէ**, **եթէ** շաղկապների՝ պայմանի իմաստից:

Օրինակ՝ «Տէս, զի ոչ տայ հրաման համարձակել նոր բան խօսել, կամ անուն, **թէ ոչ լիցի** յերից մինն, այսինքն կամ հարկն հրաման տայ կամ օգուտն կամ փառք պատճառին, ապա **թէ** օգուտն կամ անօգուտ կամ ի փառս անձին, լռել պարտ է, և ոչ խօսել» (ՀՈ, էջ 128), «Թէ ոք **անկցի** ի ծով խորին Ռ՛վ հետամուտ լինի ըըմին. **Թէ ոք երթայ ըզհետ նորին** Ի միասին **աստակեցին**» (ԱՍ, էջ 28):

Պայմանի պարագա երկրորդական նախադասություններում շատ հաճախ երկրորդ ապառնիները կրկնվում էին, որը ընդգծում էր այն իրողությունը, որ ինչ-որ գործողություն կարող է կատարվել միայն պայմանական ապառնիով ցույց տրվող գործողության կատարումից հետո: Օրինակ՝ «Ապա, **թէ ոք ստուգապէս քննեցի**, և աստ նշանագիծն յառաջ է քան զտգիտութիւնն, վասն այն **ասէ** կամ ի վերայ ոչ միոյն **գտցես**. ընդդէմ որ **ասէ**, **թէ բարձցի** գիտելին, **բարձցի** և գիտութիւն» (ՀՈ, էջ 134):

Պայմանի պարագա երկրորդական նախադասություններում ստորադասական եղանակի ժամանակներին փոխարինել են կու մասնիկով ներկա-անկատարը, որը նշված տիպի նախադասություններում վերաիմաստավորվում էր պայմանական ապառնու: Նման կիրառությունների պատճառով էլ միջին հայերենի ներկա-անկատարը հետագայում դարձել են պայմանական եղանակի կայուն ձևեր:

¹ Քննում ենք միայն այն պայմանի պարագա երկրորդական նախադասությունները, որոնցում գործածվել է ստորադասական եղանակի ժամանակաձև:

² Տե՛ս Ս. Անթոյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Երևան, 1975, էջ 461:

2.2.4. Ստորադասական եղանակի կիրառությունները հռետորական, հարցական նախադասություններում: Ստորադասական եղանակի ժամանակաձևերը 14-րդ դարի գրականության մեջ հանդես են եկել նաև հռետորական, հարցական նախադասություններում: Լ. Յովհաննիսյանը, քննելով առաջին և երկրորդ ապառնիների երկրորդական կիրառությունները, նշում է, որ որոշ լեզվաբանների կարծիքով նշված ժամանակաձևերից առաջին ապառնին կիրառվում էր հռետորական հարց-նախադասություններում (Բագրատունի, Չալքիսյան, Մալխասյան, Աբեղյան): Չնայած այս կարծիքներին՝ Լ. Յովհաննիսյանը ցույց է տալիս, որ հարցական բնույթի նախադասություններում հավասարապես կիրառվել են առաջին և երկրորդ ապառնիները¹:

Միջին հայերենում հռետորական, հարցական նախադասություններում գործածվել է միայն երկրորդ ապառնին, ինչն էլ վկայում է այն մասին, որ առաջին և երկրորդ ապառնիները նման հատկանիշով չեն հակադրվում:

Հռետորական հարցման դեպքում կիրառվել են *արարել* անկանոն բայի թեք ձևերը և *եմ, լինիմ* բայերը. վերջին երկուսը իմաստային տեսանկյունից նույնական են: Նշված բայերի ստորադասականի ձևերը նախադասության մեջ, հարադրվելով հարցական դերանունների և բառերի հետ, կարող են արտահայտել և՛ հռետորական հարցում, և՛ սովորական հարցական նախադասություն՝ ձևավորված պատասխանի ակնկալիքով:

Այսպես՝ *արարել* բայը հռետորական նախադասություններում գործածվել է երկրորդ ապառնու առաջին դեմքի եզակի և հոգնակի թվերով՝ հարադրվելով *զի՞նչ* հարցական դերանվան հետ: Օրինակ՝ «*Ձի՞նչ արարից անձին քոյին*» (ԱՍ, էջ 93), «*Ձի՞նչ արարից իմոյ անձին*» (ԱՍ, էջ 116), «*Ձի՞նչ արասցուք ցաւոց քոյին Սողորելոյո ընդ բանսարկուին*» (ԱՍ, էջ 28):

Երբեմն հռետորական հարցը ձևավորվում է հարցական դերանվան շեշտակիր տարբերակով: Օրինակ՝ «*Ձի՞նչ արասցուք յայս երկուսին, Ձի ոչ գոյ վարք առանց սոցին*» (ԱՍ, էջ 129):

եմ պակասավոր բայի առաջին ապառնին կիրառվել է հռետորական նախադասությունների մեջ՝ իմաստային տեսանկյունից հարաբերակցություն դրսևորելով լինիմ բայի հետ: *եմ* բայը հանդիպադրվում է *ո՛վ* հարցական դերանվան հետ: Օրինակ՝ «*Ու գշարն անենայն որ նախատէ Բայց առանց չար ո՛վ որ իցէ*» (ԱՍ, էջ 60), «*Քեզ ո՛վ իցէ այլ օգնական*» (ԱՍ, էջ 30):

Լինիմ բայը հռետորական նախադասություններում հանդես է եկել զինչ հարցական դերանվան հետ: Օրինակ՝ «*Որպէս էի կամ զինչ եղայ, Կամ զինչ*

¹ Տես Լ. Շ. Յովհաննիսյան, Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը, Լեզվի և ոճի հարցեր, հ. 3, Ե., 1973, էջ 302-303:

լիցին // լինիմ առաջիկայ» (ԱՍ, էջ 34), **«Իսկ որ կարիքն է միջնորդի՝ Չիա՞րդ այլոց միջնորդ լիցի»** (ԱՍ, էջ 152):

Չեռտորական նախադասություններում երկրորդ ապառնին հանդես էր բերում ըղծական ապառնու իմաստ, իսկ սովորական հարցում արտահայտող ուղղակի խոսքում՝ պայմանականի ապառնու:

Բացի հռետորական նախադասություններից՝ ստորադասական եղանակի ժամանակաձևերը հանդես են եկել նաև սովորական հարցում արտահայտող ուղղակի խոսքում: Եթե հռետորական նախադասություններում կիրառվել են **արարել, լինիմ, եմ** բայերը, ապա հարցում արտահայտող ուղղակի խոսքերում կարող են կիրառվել գրեթե բոլոր բայերը: Օրինակ՝ **«Տընկեաց Աստուած գղրախտոյ յԱղեմին Ի ինքըն մընջեաց ի պարտիզին Չոր ժանուցեալ իւղաբերին. «Դու պարտիզպա՞նն իցես դրախտոս»** (ԱՍ, էջ 170), **«Յարցեալ ի նոցանէ և ուսուցանէր, լծէ ո՞ գըտցէ մեծ չար որ զԱդամ պատրէր»** (ԱՍ, էջ 254):

Ստորադասական եղանակի ժամանակաձևերը հանդես են եկել բարդ համադասական և ստորադասական նախադասություններում՝ վերջիններիս մեջ կիրառվելով թե՛ գլխավոր, թե՛ երկրորդական նախադասություններում: Սակայն ստորադասական եղանակի ժամանակաձևերը ավելի շատ գործածվել են երկրորդական նախադասություններում, ինչը պայմանավորված է եղանակի քերականական իմաստից, այն է՝ միայն ապառնի ժամանակ ունենալու իրողությամբ: Վերջինիս համար կարևոր է այն, որ ելակետային գործողությունը արտահայտվի կատարված կամ կատարվող կերպի ժամանակաձևերով, որի հիմքի վրա էլ հաջորդող գործողությունները կարող են արտահայտվել ստորադասական եղանակի, այդ թվում նաև՝ այլ ապառնի ժամանակաձևերով:

ՍԿՁԲՆԱԳՅՈՒՐՆԵՐ¹

1. Առաքել Սիւնեցի, Ադամգիրք, Մ. Յ. Պոտուրեան, Վենետիկ, 1907:
2. Առաքել Սիւնեցի, Դրախտագիրք, հրատարակվեց Յ. Ներսէս Սէր Ներսեսեան, Վենետիկ, 1956:
3. Ա. Սրապյան, Յայ միջնադարյան գրույցներ, Երևան, 1955:
4. Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա, Երևան, 1950:
5. Խաչատուր Կեչառեցի, Տաղեր, Երևան, 1988:
6. Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Սրապյանի, Երևան, 1962:

¹ Համառոտագրվել են սկզբնաղբյուրների հեղինակների անուն-ազգանունների առաջին տառերը և գրվել են սկզբնաղբյուրների էջերը:

7. Յովհաննու Որոտնեցոյ, Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի, հավաքական տեքստը, առաջաբանը և ծանոթագրութունները Վ. Կ. Չալոյանի, Երևան, 1956:
8. Հայ գրական քննադատության քրեստոմատիա, Կազմեց և ծանոթագր. Ժ. Քալանթարյան, Երևան, 1981:
9. Հովհաննես Երզնկացի, Բանք չափավ, աշխատասիրությամբ Ա. Սրայայանի, Երևան, 1986:
10. Ֆրիկ, Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Տ. Ղանալանյանի, Երևան, 1982:

ПЕРЕОСМЫСЛЕНИЕ ВРЕМЕННЫХ ФОРМ СОСЛАГАТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ В ЛИТЕРАТУРЕ 14 ВЕКА

**Т. ШАХВЕРДЯН
К. АДЖЯН**

РЕЗЮМЕ

В литературе 14 века формы сослагательного наклонения встречаются в сложноподчиненных и сложносочиненных предложениях, где употреблялись в главных и второстепенных предложениях. Этот фактор был обусловлен грамматическим смыслом наклонения-фактором будущего времени. В этом плане важно отметить, что главное действие должно было быть выраженным в длительном или в совершенном времени, на базе которого последующие действия могли быть выраженными сослагательным наклонением и вместе с тем разными формами будущего времени.

TRANSPOSITION OF TENSE FORMS OF CONJUNCTIVE MOOD IN THE 14TH CENTURY LITERATURE

**T. SHAHVERDYAN
K. HAJYAN**

RESUME

In the 14th century literature the tense forms of conjunctive mood were found both in the compound and complex sentences being used in the latter either in main or subordinate clauses. The tense forms of conjunctive mood were more frequently used in secondary clauses which is presupposed by the grammatical meaning of the mood and by the existence of future form. It is important for the latter that the primary action should be expressed by the tense form of continuing or resulting action, on the basis of which the following actions might be expressed by conjunctive mood and also by the forms of future tenses.